


Կ. Արտավազ

Գիշել ԻՄ ՀԵՌՈՎՆԻՈՐ



76
V

891.99

Կ. Ս Ի Տ Ա Լ

Ա

ԳԻՒՂՆ ԻՄ ՀԵՇԱԽՈՐ

A 29650



Հրատարակութիւն Ամերհօկի

1936



ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նախապէս «Անհաս Բարձումքներ» անւանած էի ներկա պատմւածքը : Անհրաժեշտ ընդարձակ փոփոխութիւններու հետեւանքով նոր ընթացք ստացաւ այս վիպերգութիւնը : Այս պատճառով «Գիւղն իմ Հեռաւոր» անունը աւելի նպատակայարմար գտա :

Ես աշխատած եմ «Գիւղն իմ Հեռաւոր»ով տալ նախախորհրդային գիւղի կեանքը՝ այնքան հարազատօրէն որքան որ ժամանակի եւ հեռաւորութեան իմ ներկա անջրակետը կընա թոյլատըել :

Հրապարակային եւ մասնաւոր ընթերցումներու միջոցով այս գործը զանգւածներու քննադատութեան առարկան ըրի եւ խոշոր չափով օգտւեցաւ եղած ընկերական դիտողութիւններէ :

«Զարոյի նամակ»ով հին գիւղը կապեր եմ Խորհ . Հայաստանի լուսաշող իրականութեան :

Յոյս ունիմ որ մօտաւոր ապագային ես կունենամ առիթը երգելու Զարոներու եւ Զէյլաներու հարւածային եւ հերոսական աշխատանքի դիւցադներգութիւնը՝ ներշնչւած Խորհ . Հայաստանի աշխատաւորութեան մեծագործութիւններով եւ փառահեղ վերելքով :

Կ. Ս.

ԶԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ

Թամնկագին Կարո՛, հեռաւոր ընկեր,
Քե՛զ կոլլսողական բոցավառ ողջո՛յն .
Կարմիր մարտերու պոետիդ նւեր՝
Մեր յաղքանակի քափը շառաչուն :

Համոյի որդին — հովիւ Զարո՛ն եմ —
Քեզ հետ նոյն ցաւոտ գիւղին մէջ ծնած .
Մեր զլխի վերեւ՝ զրկանքի բազէն —
Մի օր կուշտ փորով չոր հաց չի կերած :

Դու վազ գնացիր Վանա Այգեստան ,
Ուր քեզ փայփայեց ուազմերգը ծովի .
Եւ ուր քաղէ քաղ ինչպէս ուրական
Սարսափն էր ելեր՝ ջարդի ու սովի :

Ու ես ալ մեծցա գիւղի ցաւին հետ .
Եղա գառնարած եւ եղա հովիւ .
Տեսա ողը ու լաց ինչպէս վարար գետ
Եւ աննար կարիք եւ զրկանք՝ անքիւ :

Տեսա քէ ինչպէս անկուշտ մի վոհմակ —
Եւ տանիկ եւ քուրդ եւ հայ՝ անխափան
Կը սրորեկին բիրտ կրունկի տակ
Գողջուկն այդ անքախտ եւ անմիաբան :

Դու գիտես կարո՛, կեանքը մեր դաժան —
Արիւնով զրւած մի ողբի գիրք էր .
Գիտես թէ ինչպէս մի օր միաբան
Ելանք դառնալու մենք մեր հողի տէր :

Օրն այդ անմոռաց — ելանք միասին —
Թէ հայ եւ թէ քուրդ առանց խորութեան .
Փշրեցինք լուծը քեկին եւ ուսին,
Դարերով շաշող գերութեան շղթան :



Սեւ անգդի նման՝ թեւերով անծիր՝
Քաղեց այդ օրը պատերազմն ահեղ .
Մայրերն սկսան մի ողբերգ անգիր,
Ու կեանքը եղաւ լոկ շիւղ ու տաշեղ :

Ու հրդեհ դարձաւ ցեղային քէնը,
Գեղջուկը ելաւ գեղջուկ եղրօր դէմ .
Քակւեցաւ արեան թաց ժապաւէնը,
Ոչ մէկ քան մնաց կանգուն եւ կամ շէն :

Լալով հեռացանք ես ու ոքք Զէյլան
Մեր մեռելաշատ գիւղէն արիւնոտ .
Ծուլսը քոներ էր Վանա Այգեստան,
Եքք այնտեղ հասանք գաղքի առաւօտ :

Անգին մանեակն այդ փերուզ ծովակի ,
Բնութեան երկնած այդ շենք քերթած՝
Բաժին էր հաներ ծուլիի , կրակի
Բանակը ցարի նահանչի ելած :

Եւ հէք ժողովուրդն անոր դարաւոր՝
Լքած հայրենի իր հողը պայծառ՝

Մի մահապարտի պէս գլուխը կոր՝
ինկած էր գաղթի անյայտ նանապարհ :

Ախ , այդ նանապարհն — անծա՛յր զերեզման ,
Որ օղակ—օղակ վիշապի նման
Զգւած էր Վանէն մինչեւ Երեւան ,
Սկիզբը՝ արցունիք ու մահ էր վախճան՝

Ու մենիք ալ նամբէն այդ լացի , արեան
Հասանիք երկիրը խաչապաշտ ցարի .
Փուեր էր չժնաղ դաշտն Արարատեան
Որպէս արիւնող մի սիրտ վիր-խարի :

Ուր կար ժամի բակ , լքւած զօրանոց —
Այնտեղ էր ինկած Վանի գաղթական .
Տենդէ հալ ու մաշ , կրծքին ցաւ ու լոց ,
Խորի պէս փուած օտարի դրան :

Քուն կը մտնէին լուսնակի լոյսով ,
Աչքերուն՝ թռվքը Վանա ծովակին .
Կ'ելնէին անոնիք նոր օրւա յոյսով —
Սառ դիակներով ծածկած այդ գետին :

Այդ մեծ երկրի մէջ խաչապաշտ ցարի
Դարձեալ գիւղացին զրկւած ու խեղն էր .
Եւ կը ծանրանար մի թա՛թ վիր-խարի —
Ու կեանիք բոլոր մի հառաչանիք էր :



Եկաւ դաշնակը ինչպէս պատուհաս —
Գերեզմանափոր բորենու նման .
Սուզը մեր երկրէն մնաց անպակաս ,
Եւ մեր դաշտերէն՝ հեղեղներն արեան :

Եղա ես բադրակ, եղա ես բանոր,
Բնաւեր քոչուն՝ նետւած հովերուն —
Ամեն կողմ գիակ, մռայլ ամեն օր,
Սահմանները՝ ծուլս, սահմաններն՝ արխոն:

Եւ որքա՛ն յանախ՝ ես ու հեզ Զէյլան
Յիշեր ենք մեր որբ գիւղը մանկութեան,
Եւ այն օրերուն տուած երանի
Երբոր կ'իշխէին բեկն ու հարամի :



Դարերու ցաւոլ խոցւած մեր հոգին
Ալ չի հանդուրժեց այսքան զրկանքի.
Լենինն էր վառեր այն կարմիր ուղին.
Սովետ կարգերու, կարմիր գալիքի :

Աշո՞ւն էր մռայլ, անծիլ նոյեմբեր.
Ու մենք դուրս փրքանք փոք-որկի նման,
Բանոր գիւղացի — ո՞վ որ զրկւած էր —
Ո՞վ, որի կեանքն էր տանջանքի մատեան :

Մասիսի դէմք՝ երեղէն վարդի պէս
Ելաւ սովետի դրօշակը կարմիր.
Կարմիր ու հօր՝ անմար բոցի պէս —
Շուրջը դարերու աւերն ու մոխիր :

Եւ բազմաչարչար երկիրն նայիրի
Ուսէն քօրափից սուգի պատմունան.
Պրկեց մեծագործ իր բազուկն արի —
Ու ելաւ գործի — անհաս կառուցման :

Հօր ու նարտար ձեռքն այդ բանորի
Դուրս հանեց գետերն հունէն դարաւոր.
Զառ հագան ամուլ դուրն մեր երկրի,

Մեր նոր կենցաղի տօնին ուխտաւոր :

Տրակտո՞րն եկաւ բոցաշունչ վագֆով —
Պողպատէ բաշով այդ հրեդէն ձին .
Խոպան դաշտերը դարձան ծաղկոն ծո՞վ ,
Եւ արեւաւոր՝ աղքատ գիւղացին :



Զէյլան ալ ինձ հետ վաղուց՝ խանդավառ
Անդամն է գրւած գիւղի կոլխոզին .
Մեր պայքա՞րն է լուրջ , բայց ինչպէս պայծառ ,
Դաշտի բերքառատ , կենսասու գործին :

Փոքրիկ Սոնիկս է հիմա պիոներ ,
Լենիկս՝ կոմերիտ , Վանիկը՝ զինուր ,
Շնչող են ինչպէս լոյսի կայաններ ,
Մեր նոր կենցաղի նման՝ լուսաւոր :

Ու մեր կոլխոզն ալ գիւղերու միջին՝
Լաւ հարւածայնի անունն է շահեր .
Եւ մենի հերոսի նշանը լանջին՝
Դիրքի վրա ենի ցորեկ ու գիշեր :

Երբեմն ինչպէս մի ամպ կամ ըստեր ,
Մեր մտով կ'անցնին գիւղն ու Ազիզ թեկ ,
Ժամի հին բակը եւ դաշնակ մավզեր ,
Սովոր ու մահի այն մոայլ երէկ :

Որքա՞ն տարբեր է մեր մեծ առօրեան —
Երկարով , տեմպով եւ երգով վարար .
Բացւեր է շքեղ երազի նման
Լենինեան այս վեհ դարը լուսավառ :

Եւ որպէս արծուի լուսաթեւ երամ

Կը քեւենի ահեղ, անհաս քարառւնիներ.
Ուր մարդը մտֆի քեւերով անգամ
Բարձրութիւնն անոնց չափել չէ կրցեր:

Եւ դեռ մեր դէմն է մի անհուն վերելք,
Ու բիւր լուսեղէն կատարներ փառֆի,
Բոնկած անծիր մի նոր արեւելք՝
Մեր կայծակնաքափ, լուսաշող կեանիքի:

Սիրելի կարո՛, շատ երկար կեանի ժեզ,
Քե՛զ հրէ համբոյր ընկերդ Զարոյէն,
Քեզ կարմիր բարեւ, կարօտ բոցակէզ
Մեր լուսահեղեղ, յաղքական երկրէն:

Լաւ ենի ու գւարք՝ փրքող գարնան պէս.
Ինչպէս զառ սարէն կարկաչող աղբիւր.
Զէյլան ու Լենիկն ու Սոնան նոյնպէս
Քեզի կ'ուղարկեն զառ սէր ու համբոյր: —



Լացով կը կարդամ՝ կրկին ու կրկին
Ընկեր Զարոյի նամակն այս պայծառ.
Խնդութեան լացն է բռներ իմ հոգին՝
Գարնան գետերու հոսումով վարար:

Թող միշտ վա՛ռ շողա արեւի նման
Շքեղ անունը անմահ Լենինի.
Թո՞ղ շէն ու դալար անի յաւիտեան
Զգուղ հասակը նոր Հայաստանի:

Իմ արի Զարո, ժե՛զ պիտի երգեմ,
Եւ մեր մանկութեան գիւղը հեռաւոր.
Պայքարն այն հզօր՝ զոռ տէրերու դէմ,
Եւ մեր յաղքութեան օրը փառաւոր:

I

Վեհ ու շքեղ է Շատախի գաւառ .
Գետի երկու ափ ձգւեր են պայծառ
Այն բարձր սարեր , անտառն ու արօն ,
Դաշտերն այն ոսկի եւ նախիր եւ հօտ :

Փարքամ այդ երկիրն , հողը ծաղկազարդ՝
Վայրագ մեծերու եղեր են աւար .
Դառըն դատեր է հազար , հազար մարդ
Մի բուռ տէրերու վայելքի համար :

Զինջ ու փրփրալէն՝ անհամար տարի
Գետը հոսեր է զառ ձորերն ի վար .
Այստեղ գեղջուկը՝ անհաց ու գերի՝
Ապրեր է նորտի իր կեանքը բշւառ :

Վարսուն ձի՛գ տարի՝ զրկւած ու չարքաշ՝
Այստեղ ապրեր է եւ՝ Համոն անբախտ .
Չոր հացի կարօտ , հոգսէն հալ ու մաշ՝
Կարծեր է այդ է տիրոջ կամքն անխախտ :

Նա օր ու գիշեր անջրդի հողէն
Ճամկերով համեր է հազար բարիք .
Եւ իր ստեղծած բարիքի ծովէն
Իրեն վիճակւեր է ցաւ ու կարիք :

Ծեր Համոն ունէր երեք որդիներ —
Կարիքով ծնած ու տկլոր մեծցած .
Զարոն , որ մեծն էր , քաջ ու շիկահեր ,
Ելան կարգեցին գիւղի գառնարած :

Միջնեկն ալ եղաւ հոտադ քեկի տան՝
Եզներու ետեւ ընկած ամեն օր .
Պզտիկը մնաց իր հօր օգնական
Եւ աչքի լոյսը իր խեղն պառաւ մօր :

Իսկ մայրը — Սանամ — իլիկ կը մաներ
Շինելու իրենց տանջւած ջանին շոր .
Այսպէս մի ողջ տուն հոգին կը հաներ
Որ պահէր գլուխն ու խաբէր մի փոր :

II

Զարոն եօթ տարի մնաց գառնարած .

Չնձաղիկն որ գար , կելնէր սար զոզան⁽¹⁾—

Իր հօտը ծաղկուն արօտներ հանած —

Չորս կողմ հարամի , չարկամ ու գազան :

Չոր քարի վերէն , զառ խոտի վրէն

Կը նստէր Զարոն՝ փողն⁽²⁾ առած բերան .

Ու դալար ճորէն ու դարի ծերէն

Կիշնէր ջրի ափ իր հօտը մերջան⁽³⁾ :

Լո , լո , լո , լո , լո , . . .

Վառ ու կենսատու գարնան արեւուն ,

Կակաջէն կարմրած բարձր սարերուն ,

Հանդէ հանդ ծփուն զմբուխտ ծռվերուն ,

Ծաղկով հոտաւէտ մարմանդ հովերուն :

Լո , լո , լո , լո , լո , . . .

Սրսուն ու կայտառ սիրուն գառներուն ,

Արքշմէ քելով չուտիկ⁽⁴⁾ ուլերուն ,

Հովլի սրմգի անուշ սոյլերուն ,

Լո , լո լալազար գարուն օրերուն :

Եւ շոգ կեսօրին , երբ խոնչ , արեւառ ,

Բեր⁽⁵⁾ կը հասնէին գիւղի աղջիկներ —

Եսեւէն շարած հազար ուլ ու գառ —

Զարոն իր գառներն այնտեղ կը բերէր :

(1) Զոզան—Լեռնային ամարանոց

(2) Փող—Մրինդ

(3) Մերջան—Բուստ

(4) Չուռ—Եղիսար մետաքսանման մազերով այծ

(5) Բեր—Ոչխարի ցերեկային հաւաքատեղի , կաթ

կթելու նպատակով

III

Լեռներու վրա գիշերը կիշներ
Ակունքով քանտած ծածկոցի նման .
Խշալէն անուշ՝ գետը կը հոսէր —
Լուսնի տակ բակւած արծաթէ պարան :

Մի ժայռի տակին հօտը մակաղած՝
Ու հսկա շներ կարգած պահապան՝
Հովիւն ու Զարոն մէկ մէկու դիմաց
Կըսէին զրոյց ու երգ գեղջկական :

Հովիւը թիկնեղ մի ծեր էր բարի՝
Սարերու վրա իր կեանքը ասլրած —
Սարերու նման սէզ ու վիթխարի՝
Հազար փոքրիկ ու փորձանիք տեսած :

Իսկ Զարոն ելած էր որպէս չինար —
Հազիւ աղւամազ բուսած երեսին .
Թէեւ հովի պէս չէր ապրած երկար —
Բայց շատ զրկանիք էր եղած իր բաժին :

Ունէին անոնք սրինգ հովւական
Որպէս մենութեան եւ վշտի ընկեր .
Եւ աղքիւրներու ջինջ ջրի նման
Սրինգէն անոնց սիրտը կը հոսէր :

— Հովիւը որ կա, Զարո՛, որդի ջան,
Զրկւած գիւղացու պաշտպանն է ու հայր . —
Յոզնած մշակին նա է կուտա թան,
Կը տանի հօտը նամբէն լալազար :


Շուրջըդ գազա՞ն է, գող ու բռնակալ —
Աչքը գեղջուկի ոչխարին տնկած ·
Անոնք համարձակ կամ դարանակալ —
Մեր վրա կրնան յարձակիլ յանկարծ :

Բայց քանի հովիւն ուժ ունի եւ կեանք —
Նա հօտը անվախ պաշտպանէ պիտի .
Նա պիտի յիշէ խեղներու զրկանք
Եւ քաջ ու հպարտ կուելով մեռնի : —

Կը պատմէր անվերջ կոխւ ու արկած
Սարերը նետուած չարքաշ իր կեանքէն .
Մինչեւ ոք ծաղկէր ոսկի լուսաբաց,
Եւ հօտը ելնէր ծաղկազարդ նամրէն :

Կը բաժնւէին անոնք կարօտով՝
Ինչպէս միամօր գառնուկի ու մաքին .
Սրինգն ածելով՝ ծաղկուն արօտով
Նորէն բերելու հօտն բերատեղին :

A II
29650



IV

Սարի զառ լանջին գիւղն էր կծկւած —
Գետնափոք տներ — տրտում եւ անհաց.
Գիւղը՝ լաց, արիւն — գիւղն էր տառապանք,
Ուր օրը սարսափ՝ եւ կեանքն էր զրկանք :

Տաշւած քարերէ՝ մեծ բերդի նման՝
Ժամն էր բարձրացեր տիրող ու դաժան.
Այնտեղ Աստուծո կամքովն անյեղլի՝
Տէրտէրը կօրհնէր լուծը իշխողի :

Եւ գիւղի վերեւ, մի բլրի կատար
Բեկի մեծ տունն էր կանգներ վեհափառ —
Շէն ու ահազին, բարիեռլ առատ՝
Խեղն գիւղի վերեւ բազմեր էր հաստատ :
Տո՛ւն չէր այն կարծես — պատիժ անվախնան.
Գիւղացու մէջքին նստած անքածան .
Եւ որպէս վիշապ ծածկեր էր արեւ՝
Ելած աղքիւրի եւ կեանքի վերեւ :

Ազահ մի տոհմ էր տունն այդ ժառանգած
Եւ գիւղն ու դաշտերն այդ լայնատարած .
Դառն կը դատէր մի ողջ ժողովուրդ
Պահելու համար տունն այդ անյագուրդ :

Ծնած առաջին զառը — բեկին էր,
Բեկին էր հարսի առաջին գիշեր .
Անո՞րն էր բերքի մեծագոյն բաժին
Եւ շատն ու ընտիրն բուրդին ու գաժին⁽⁶⁾ :

Թի՛ւ, համբանք չուներ հօտն անոր անծայր ·
Անո՞րն էր ջուրը եւ արօտն ու սար,
Ցորենի արտերն հարուստ ու յուռքի —
Իսկ գեղջկին միայն հողերն անջրդի :



Այդ գիւղը ուներ երկու ժողովուրդ —
Մէկը՝ հայ գեղջուկն ու միւսն՝ անբախտ քուրդ ·
Երկո՞ւքն ալ տեսած զրկանք անյատակ՝
Վայրագ տէրերու բիրտ կրութելի տակ :

Երբոր հանդիպէր գայլ, գող կամ ասկեաբ՝
·Քու՞րդ ես կամ թէ հայ — թնաւ հարց չէր տար ·
Երկուքն ալ զրկւած, թշւառ գիւղացի —
Վէրքերով հարուստ եւ առանց հացի :

Եւ տէրտէրն ու քեկն ու ռեսն ու մոլլան
Կըսէին երգեր վրէժի ու արեան ·
Որպէս զի համայնքն այդ խեղն ու անհաշտ
Դառնար կեղեքման լայն ու պարարտ դաշտ :

Շարունակ կախւած մէկ մէկու դէմքէն,
Նո՞յն վէրքն ստացած նոյն անգութ ձեռքէն ·
Զէին գիտեր թէ ո՞րտեղէն, ի՞նչպէս
Այդ ոլսն էր դիզւեր Արնոս սարի պէս :

(6)Գած—Զուռ այծի մետաքսանման մազը

V

Բերն էր իշեր ոչխարն արդէն
կանաչ ճամբէն, զառ արօտէն .
Գիւղէն հասան օրօր — շորոր՝
Հարսն ու աղջիկ — մի խումբ բերւոր⁽⁷⁾ :
Բա՛րկ էր արեւ, ճամբան՝ երկար —
Փուշ ու վոշի — կածան ու քար .
Եկան նստան ջրի ափին —
Գլգլան ջրի երգին, ծափին :

Ճնշեց վողը, զնգաց ծիծաղ
Բերւոր խմբէն՝ երգեր ու խաղ .
Եւ զոգանէն, խոտնոցներէն
Տղաքն եկան թրվուալէն :
Եւ շուրջպարի ելան բոլոր —
Աղջիկ, տղա մուրադաւոր .
Այնտեղ, սարի ազատ լանջին
Մտիկ տալով սիրո կանչին :

— Մի քելի բորիկ,
 եարո՛ ջան,
Փուշ կելնի տոտիկ,
 եարո՛ ջան .
Սարերու ծաղիկ,
 եարո՛ ջան,
Դո՛ւ ես խորոսիկ,
 եարո՛ ջան :

— Ոչխարն է բերին,
 ա՛յ տղա ,

կրեմ քուխ մաժին,
ա՛յ տղա,
Տանեմ սիրողին,
ա՛յ տղա,
Հնձւոր էն տղին,
ջա՛ն տղա՛ :

- Երբամ հստամպոլ,
Խարո՛ ջան,
Բերեմ մի ջուխտ սօլ⁽⁸⁾,
Խարո՛ ջան,
Հագնես, Երբաս թեր,
Խարո ջան,
Տոտիկդ չ'արուներ,
Խարո ջան :
- Տրեխ կը հագնեմ,
ա՛յ տղա,
Լաշակ կը բալեմ,
ա՛յ տղա,
Հինա կը դնեմ,
ա՛յ տղա,
Քո բոյին մեռնեմ,
ջա՛ն տղա . . .

Կար կրելու կը նստէին՝
Կրոցի մէջ բռնած լուսին,
Երբոր զնզուն ճայնով Զարոն
Կերգեր յուզիչ «բերխվանոն» :⁽⁹⁾

- Բերւոր աղջիկ, մարալ աղջիկ,
Դու վառ արեւ ու ծիծաղ ես
Լէ լէ լէ լէ լէ լէ լէ :

Բերւոր աղջիկ, շորոր աղջիկ

Հերիք սիրտըս բոնած դաղես,
լէ լէ լէ լէ լէ լէ լէ . . .

Բերւոր աղջիկ, նանչւոր աղջիկ,
Հաւիք ես անհաս, բոցէ կարօտ
լէ լէ լէ լէ լէ լէ լէ . . .

Բերւոր աղջիկ, նազան աղջիկ ,
Ես քեւ առնեմ քռնեմ քո մօռ.
լէ լէ լէ լէ լէ լէ լէ . . .

- (7) Բերւոր—Բեր գացող աղջիկ — կաթնաղջիկ
(8) Սօլ—Տեղական կարմիր կօշիկ
(9) «Բերիվանե»—Քրդական հոգւերդութիւն բերւոր
աղջկա մասին

VI

Զարոն կը սիրէր մի շքեղ աղջիկ —
 Աղքատ մի քրտի դուստրը գեղեցիկ .
 Եւ այն սարերու եղնիկի նման
 Թուլս աչքեր ունիք ու շնորհ՝ Զէյլան :
 Գիւղը ամեն մարդ այդ բանը գիտէր
 Թէ հայը քրտի աղջիկն է սիրեր .
 Կըսէին գիւղին փորձանձ պիսի գար
 Եթէ չի դադրէր սէրն այդ խելագար :
 Եւ պառաւ Սանամ օր ու իրիկուն
 Զերմ խնդիրք կընիք հայու Աստրծուն ,
 Որ խենք Զարոյին խելք ու շնորհ տար
 Եւ նա անպատիւ այդ սէրը մոռնար :
 Խսկ ծերուկ Զնդին՝ անխօս ու մոայլ՝
 Հեռու իր հանդը կերպար ծանրաբայլ .
 Որ այն ապերալսու հողէն ու ժայռէն
 Հանիք ճմեռւա իր խեղնուկ պարէն :

Եթք կուգար պայծառ ու շոգ միջօրէն՝
 Կերն առած շալակն ու շորորալէն
 Հանդը կը հասնիք շողշողուն Զէյլան .
 Որ հօր աշխարհն էր օրն ու ապագան :
 Զնդու սէրն այնիք մեղմ էր ու քնիուշ
 Ինչպէս վարդերու բոյքը փաղաբուշ .
 Եւ իրեն նետւած այնքան բուժ ու մուր
 իր սրտի խորքը քաղած նա ամուր՝
 Մ'ի ժպուղ այնքան զերմ ու դիւրեկան
 Որքան հեռացող արեւը աշնան՝
 Կսպառէր տակաւ Զէյլայի դիմաց
 Դեռ մահիւ ճիւնը գլխին չի մաղւած .

- Բարո՞⁽¹⁰⁾, մքներ ես ամպոտ օրւա պէս .
Ի՞նչ ցաւ է արդեօֆ որ կը տանջէ ֆեզ.
- Հասեր է կեանիքս տխուր մայրամուտ
Ու սրտիս պատեր է բախիծն ու մութ :
- Այդ մեր բոլորիս ուղին է դաժան,
Ի՞նչ է քո ցաւը, ըսէ, բարո ջան .
- Ինչպէս չի տխրի քո անբախտ բարոն՝
Դարձեր ենք գիւղի մենք բերնի ծամոն :
Դու քրտի աղջիկ — նա հայի տղա
Եկուր այդ սէրէդ վազ անցիր, Զէյլա' :
- Թէ հայն ու քուրդը մօրմէ չ՞են ծներ .
Նոյն ջուրն ու հողը մեզ չ՞են սնուցեր .
Մէկսե՛ղ ենք աներ նո՞յն արեւին տակ .
Լացեր ենք մէկսեղ եւ ըրեր կատակ,
Խմեր ենք յանախ միեւնոյն բասէն,
Կծեր նոյն խնձոր մէկ մէկու ձեռքէն :
- Բայց նա գեավո՞ւր է — իսկ դու մուսուլման . .
- Թող այդ մտածեն տէրտէրն ու մոլլան .
Ցիշիր մօրս մահը այն ձմրան բուժին .
Եւ մի սեւցներ քո անպարտ հոգին :
Ի զուր մենք լալով դունէ դուռ ընկանք —
մեռեր էր մայրս — եւ չկար պատաճք .
Եղբայրդ անգամ ծաղրեց մեր ցաւը .
Ո՛չ ոք մեզ տուաւ այդ բիզ կտաւը :
- Զէ՛յլա, մի դպիր այդ անբուժ վէրքին ,
Մի՛ բանար բաղւած այդ խոցը կրկին :
- Դուրսն էր սաստիկ բուժ ու տունն՝ անկրակ —

Կը դողայինք մենք եւ ձերի նրագ,
Երբ Զարոն եկաւ տժգոյն եւ յուզւած.
Նա փորձեց խօսիլ ու բուռն հեկիկաց.

«Անրաժին եկար — կերպաս անպատանք —
«Քո ետեւ քողած միայն տառապանք . . .»

Ըստ եւ սեղմեց բռունցքն իր հուժկու
Կարծես երեսին մի զոր քշնամու.
Վար դրաւ ապա կտափի կապոց —
Գնաց' ց — ու սրտիս մէջ վառեց մի բոց . . .
Նա ձմբան ցրտին անշապիկ մնաց,
Որ մայրս գերեզման չերպար նախառւած.
Նա այն գեավուրն է, այն սարի չորան
Այն շքեղ Զարոն — իմ եարն աննման :

Իմ անբախտ մայրը միշտ ինծի կըսէր —
«Երանի Զարոն քո եղբայրն լինէր»:
Բայց ես բախտաւոր եմ հազար անգամ,
Որ նա ինձ եղբայր չէ կամ ազգական.
Այլ իմ վառ սրտի մէկ հատիկ սիրած
Եւ քաջի նման իմ սրտին տիրած.
Թէ մեր դէմ հանեկ ամբողջ մի բանակ —
Նորէն մե՛սիք պիտի տանինիք յաղթանակ . . .

— Մենանիմ աչքերուդ, դու մի՛ լար Զէյլա,
Մօրդ գերեզման քող լինի վկա,
Ո՛վ ինձ չար խօսի ձեր սիրո մասին
Ինձ հետ հող պիտի դնեն միասին :
Ապրի՛ ձեր սէրը, եղէ՛ք բախտաւոր,
Եղէ՛ք դուք անխոց, եղէ՛ք միշտ հզօր,
Եւ ձեր վառ սիրով քող որ հայն ու քուրդ
Դառնան սրտակից երկու ժողովուրդ :

(10) Բարո — Քրդերէն հայրիկ

VII

Գիշերն էր ճգւեր քովիշ ու պայծառ՝
Արմս սարերուն՝ աստղահիւս կամար .
Այնտեղ, մի գլուխ աղբիւրի ակին
Գիւղի հայ մեծերն հաւաքւեր էին :
Եկեր էր հայդուկ մի խումբ զինավառ՝
Գիւղի հայերը զինելու համար .
Եկեր էր ոեսը, տէրտէրն էր եկեր —
Այնտեղ էր գիւղի ամեն ազգասէր :

Խմբապետն ելաւ փափախը գլխին՝
Եւ ուսէն կախած շողշողուն մոսին .

— Եղբայրնե՛ր, կանչեց, դեռ քա՞նի տարի
Գազան թիւրքին ձեռք մենք մնանք գերի :
Ռումենն ու բոլգարն, յոյնն ելան ոտքի,
Փշրեցին լուծը արիւնու թիւրքի .
Լոկ մե՛նի մնացինք գերի ու քշւառ՝
Մեր ինչքն ալ քողած քրդերուն աւար :
Զարկինք Խանասոր, քունդ ելաւ Սասուն,
Աշխարհը հնչեց հայդուկի անուն .
Մենք ուժով առինք բանկը Օտոման —
Հայերուս հռչակ ցնցեց Եւրոպան :
Ոտքի կը կանգնին Մո՛ւշ, Կարին ու Վան,
Ըռուսը կուգա մեզի օգնութեան .
Եւ մեր քաջերու արդար արիւնով
Կառնենք Հայաստան ծովէ մինչեւ ծով :

Ցուզմունքի ծով էր որ ելաւ կարծես .
Կուրծքերն ունեցան մէկ մէկ սարի պէս .

Տէրտէրն յուսավառ եւ զերմ կաղօքէր,
«Հայի Ասուա՛ծը ձեզ պահէ, բաշե՛ր . . .»

Եւ շարունակեց հայդուկը կրկին .

- Քսա՞ն իրացան ձեր գիւղի բաժին —
Թող եղներ ծախէ, ով որ եզ ունի,
Ոչխար քող ծախէ, ո՞վ որ ե՞զ չունի,
Թող ցորե՞ն ծախէ, ով չունի ոչխար
Եւ գնէ իրեն մի գէնֆ փրկարար .
Զեր հոգուն մեռնիմ, ձմեռը չեկած՝
Թող այս իմ պատւէրն լինի կատարւած :
- Դո՞ւ անհոգ կեցիր, հերոս անվեհեր,
Զայնեցին ուսոր, բազերն ու տէրտէր,
Կեցցէ՛ հայ բանակն ու ազատութիւն,
Կեցցէ հայոց մեծ յեղափոխութիւ՞ն . . .
- Խմբապե՞տ, ըսաւ հովիւն ալեւոր,
Դպրոց չեմ սեսած եւ չեմ կարդացաւոր .
Գուցէ ա՛յդ է որ խելքս չորանի
Զի հասնիր երբէ՛ այդպիսի բանի :
Երկի՞րն այս, որ շատ, շա՞տ հին ժամանակ
Հայոց արքայի հողն էր անքանակ,
Հիմա կը պահէ երեք ժողովուրդ —
Մէկը՝ մեր հայը եւ տանիկն ու բուրդ :
Կըսես որ ծանր է լուծը օսմանի,
Որ մենիք կը դատենի — քիւրքը կը տանի .
Բայց ես տեսեր եմ — ամենին են քշւառ —
Ո՞վ որ գեղջուկ է եւ զրկւած ունջրար :
Կը տքան ծանր հարկի, պարտի տակ —
Բոլորն անօքի եւ ձեռքը դատարկ .
Հանդերը կարմիր կակաջ հագեր են :

ՄԵ՛Կ է մեր տափը, մԵ՛Կ է մեր վարը·
 ՄԵ՛Լ է մեր ցաւը — մԵ՛Լ է մեր նարը,
 ինչո՞ւ վեր առնենք զենք մէկմէկու դէմ·
 ինչո՞ւ մենք վառենք նոր կոխու ու ժէն:
 Մեր քշնամին են քեկն ու հողատէր —
 Տանիկ մեծաւորն ու հայ փողատէր·
 Խսկ ամեն ազգի մշակն ու ռենջրար —
 Մեզ՝ զենիքի ընկեր ու դատի՝ եղբայր:
 Որի՞ն է երկիրն ու որի՞ն կուտաք.
 Մեր ինչի՞ն են պկուտ տէրութիւն եւ փառք —
 Երբ նորէն մտած քրտինք ու արիւն,
 ՚նոյն հա՛րկն պիտի տանք մեր հայ տէրերուն:
 Մեծերու կոխ' և այս, իմ աղրեր,
 Բռներ մեզ լսեցներս ալ մէջն են քաշեր —
 Որ ի՞նչ է ելնենք ու ջարդենք զիրաք
 Տէրերու շահի եւ փառքի համար . . .

Լոեց Հովկիւը · իր պարզուկ խօսքեր
 Դաշոյնի նման ումանց էր դպեր.
 Խմբապետն՝ կրքէն յուրած կը դողար.
 Խսկ ռեսը տեղէն ցատկեց դողահար.

— Ամօր քեզ, հովկի՛ւ, մերմակ մազերուդ.
 Ամօ՛ք է, քեզի պահիր այդ լեզուդ.
 Պատրաստ ունեցիր գառան խորոված —
 Ճշաց ռես Յովան սաստիկ կատաղած :

Շա՛տ շատեր կային ծեր հովկին հաւան.
 Բայց վախէն չելա մէկ ծպտուն ու ճայն.
 Զարո՞ն էր միայն որ անվախ գոռաց.
 «Ճիշդ է մեր հովկի ամեն մէկ ասած —
 Ամօ՛ք մեր ռեսին, եւ ամօր անման,
 Որ այստեղ կտրեր են կրակ ու բոց.
 Խսկ քեկի առաջ կը դառնան կատու
 Քանդելու համար տունն անտէր մարդու :

- Լոի՛ր, սրիկա, լոի՛ր անզգամ .
Այդ անզուսպ լեզուդ կտրել պիտի տամ .
Դո՞ւ քրտի աղջկա լկտի սիրահար,
Դո՞ւ անօթի շո՞ւն, դու անխելք տաւար . . .

- Զարոն վեր ցատկեց առիւծի նման .
- Կը պատում, ըստ, այդ աղտոտ բերան .
Դո՞ւ վախկոտ ըստրուկ եւ լիրք կեղեքող,
Դու բեկի արնոտ ձեռքերը լգող . . . :

- Մէջտեղ նետուեցան հովիւն ու տէրտէր .
- Տեղդ նստի՛ր, Զարո, տեղդ, տնաւեր .
Ալսըր նա ոնսն է եւ տարիին առած .
Ի՞նչ ես գազանի նման գազազած :
Զարոյին այդպէս մի խօսիք, այ ոե՞ս .
Կատաղի է նա վարար գետի պէս .
Աչքին չերեւար ո՞չ մարդ, ոչ գազան
Երբ կուի ելնէ այդ սարի չորան :

Դադրեցաւ վէճը. բերին խորոված,
Կարագ, մեղր ու սեր եւ քարմ լավաշ հաց,
Ճառեր խօսւեցան, իդձեր խանդավառ՝
Հայոց աշխարհի «մեծ օրւա» համար :

Խսկ բարի հովիւն այժմէն կը տեսնէր
Վաղւա արիւնոտ, անմիտ կոհիւներ .
Թշւառ հայն ելած սոլած քրդի դէմ —
Դիակ եւ մոխիք եւ արցունք ու ֆէն :

Եւ իրեն քւաց, ոք այդ խորոված
Մեռելի մի՛ս էր իր առջեւ դրւած .
Ինքն ալ մի անարգ, անխիղն մարդասպան —
Սարսափէն գլխին քաշեց իր արան . . .

VIII

Յուլիս է . պտղի եւ տապի շրջան ,
Երբ երկինքն է վառ հնոցի նման .
Եւ շոգ ձորերու միջով Շատախի
Կը ծփա հունաքը եւ պատրաստ քաղի :

Արտերն ոսկեվարս , հովերէ ծածան .
Գետափէն ելեր են մինչեւ կածան .
Ու ծայրն են քառեր բարձր դարերուն
Կորեկի ոսկի արտերը ծփուն :

Հանդերն են նախշուն՝ գորգի պէս շքեղ՝
Շուրջը՝ ծառերու զմրխտի հեղեղ ,
Եւ գետն , որ խռով եւ որոտաճայն
Կը հոսի ահեղ բռղոքի նման :



Երբ ծղրիքներու երգը զրնգուն
Հնչեց արտերէն դեղնած հասկերուն ,
Նորէն՝ յուսավառ եւ առանց հացի
Հնձելու ելաւ ամեն գիւղացի . . .

IX

Մուր էր . տակալին հաւը չէր խօսած .
Երբ դավուլ-զուռնան հնչեցին յանկարծ .
Արքնցաւ նիրիող գիւղը ցաւատանց —
Սրտին ծանրացած ցաւ ու մղձաւանց :
Դեռ նախիրն անգամ սարը չի գացած .
Դեռ ժամփարն ժամի դուռը չի բացած
Արդէն գիւղն ամբողջ ինկէր էր ճամբա —
Բեկի հանդը կար այդ օր զուրարա⁽¹¹⁾ :

Հասուն հասկերու մի ծով էր անծայր .
Որ անոնց դէմը մեղմով կը ծփար .
Աղջիկ ու տղա , կին ու տղամարդ .
Պիտի հնձձին Ազիզ բեկի արտ :

Այդ ստրկական անխախտ մի հա՛րկ էր ,
Որ գեղջուկն հնուց միշտ վնարած էր՝
Հազար տեսակի տուրքի հետ մէկտեղ՝
Իր գոռ ու գազան տէրերուն ահեղ :

Որպէս զի հունձքը աւարտէր արագ
Երկու քեւ կային եւ երկու՝ բանակ ,
Որոնց միջն բեկն եւ անարգ իր տունն
Ստեղծեր էին կատաղի մրցում :

Գիւղի ջոջերն ալ հայ — քուրդ հաւասար
Կուգային վառել ցեղային պայքար .
Թէ ո՞վ կը հնձէ իր բաժինն առաջ ,
Ո՞ր ազգն է նարպիկ , ո՞ր մէկ ազգն է քաշ ,

Խսկ անոնք — զրկւած այդ զոյգ ժողովուրդ —
Կողոպտւած հայը եւ խարւած այն քուրդ ,
Մբցման կելմէին ձիերու նման ,
Կամ ինչպէս մի զոյգ գոմէշներ կուան :

Կերգէին անվերջ դավուլն ու զուռնան .
Մինչդեռ բեկն ու ռես , տէրտէրն ու մոլլան՝
Բազմած ծառերու հանդարտ շուքին տակ՝
Կընէին զրոյց եւ խաղ ու կատակ :

Արեւը հուր էր եւ օրը երկար .
Ու կը հնձէին անոնք անդադար .
Յոգմած նւագէ , յորդորէ զգւած՝
Կը հնձէր անդուլ ամրոխն այդ անհաց :

Բեկը կայցելէր երբեմն քուրդ բաժին ,
Որոնք քրտնաքախ եւ միշտ անքածին ,
Ծառայեր էին վայրի տէրերու
Զէնինէրի համար որ շատ էր հեռու :
Երկիւղած գլուխ կուտային բռոր
Երբոր երեւնար զռո բեկն ալեւոր .
Որ ի՞նչ է իրենց այդ կեանքը դաժան
Զի դառնար դժբախտ մի հազար անգամ :

Հայերուն կերպար բեկը ողորմած .
Անոնք միշտ խոնարի եւ ահարեկած ,
Լուռ կը դատէին — դառն ու քրտնաքոր —
Միա՛յն բեկն իրենց չի նայէր խոժոռ :

Եւ կը հնձէին հրդեհի նման ,
Որպէս բարձրացող հեղեղը յորդան —
Այն սարսափավար երկու ժողովուրդ —
Մէկը՝ հայ գեղջուկն ու միւսն՝ անքախտ քուրդ :

Հասկերու ծովը ետ ետ մղեցին

Եւ ելաւ դեղին մի մարգագետին .
Ուր ոսկի մի հօտ փուած կարածէր —
Խարտեաշ հասկերու հօտը բոցահեր :

Նոր Զուրարա կար վաղն ալ ռեսի արտ .
Յետո Աստուծո համար մանաւանդ .
Մինչ հունաքի պայծառ արեւն հրահեր
Կայրէր զիւղացու հասունցած արտեր :

Երբ աստղերու հետ տուն կը դառնային .
Ալեւոր Զնդին ըստ Զեյլային .

— Ի՞նչ ողորմելի ստրուկնե՛ր ենք մենք
Որ այս ամենը անխօս կը տանենք :
Երկու ժողովուրդ ենք — երկու՝ բանակ .
Նո՞յն տիրոջ հլու , մէկմէկու՝ ներհակ .
Ու մեր տանջանքէն , քաղցէն կատաղած
Ժանիք ենք սրեր իրարու դիմաց :

(11) Զուրարա — Բոնի , անվճար համայնական աշխատանք

X

- Քո աշխն մեռնիմ, գրա՛ ինձ, տէրտէ՛ք,
Ես օր ու գիշեր կրակն եմ ինկեր,
Ու կը խորովիմ, շամփուրն եմ զարկւած.
Ո՞ր մեղքիս համար ինձ պատժեց Աստւած:
Դուռ ու դրացուն ենք ծաղր ու ծանակ,
Ամբողջ աշխարհի առջեւ՝ խայտառակ.
Զարք անցեր է որդուս առջեւէն
Եւ նա վազ չի գար այդ յիմար սէրէն:
Տէրտէ՛ք, դո՞ւ խօսիր անօրէն տղիս.
Այս բարկ կրակէն ազատիր հոգիս.
Յիշեցուր գեհենն ու կարի կարաս,
Կամուրջը մազի եւ գետն փրփրավագ:
Գուցէ վախենան եւ քողնէ իր եար,
Եւ նոր օր ծագի իր խեղն մօր համար,
Ու բաց նակատով ես դուրս գամ նորէն.
Առանց կարմրելու հայէն ու քրդէն:
- Ու ոեսին գնաց ցաւատանջ Սանամ.
Եւ պետին հայոց յեղափոխութեան,
Որ երբան խօսին իր գժւած տղին —
Որ քողնէ սիրո այդ մոլար ուղին:
- Իսկ Զարոն այդ սէգ սարերու նման
Մնաց անյողդողդ, մնաց անսասան.
- Ես ո՛չ չարչի եմ եւ ո՛չ վաշխառու.
Մանկութեանս սէրք չեմ հաներ ծախու . . .

XXI

Բերւորներն վաղուց գիւղն էին դարձած,
Գառները հեռու արօտներ ելած,
Եւ կախսեր էին շուքերն իրիկւան
Հին հէքեաբներու դեւերու նման :

Մի ժայռէ թլող աղբիւրի ափին
Նստեր էր Զարոն՝ սրինգը բերնին.
Եւ այն կարկաչող ջրի պէս վնիտ
Կը հոսէր անոր երգը մարգարիտ :

— Երգը ձեզի, մարմանդ հովեր,
Հեւքը ձե՛զի, կանաչ սարեր.
Չեզ, արօտներ եւ մատղաշ ջո՛ւր,
Չեզ, գառներու հօտը գրգուր :

Սիրտը հո՛վ է, սիրտը ծո՛վ է,
Սիրտս անրջանիք, անհուն քո՛վ է.
Սիրտը ծի՛լ է, վառ փք-քեր է,
Սիրտս նունուֆար, անմեռ սէ՛ր է:

Հայրենի սա՛ր, զառ բագմեր ես,
Ջրիդ երգով ինձ կը կանչես.
Ես արծի՛ւ եմ սիրո քեւով —
Թունեմ երքամ իմ եարիս քով :

Օրօ՛ր գառներ, օրօ՛ր սարեր,
Սրտիս մի նոր օ՛ր է ծագեր.
Երբ մուրն իջնէ, լու աշխարհ՝
Սիրտը երգեր ունի պայծառ :

— Զարո՞ն՝, ա՞յ Զարո՞ն՝

— Հե՞յ ջան, ե՞յ Զէյլա՞մ . . .

Զբացեր էին շուքերն իրիկւա.
Ու գով մընշաղն իջեր եր մեղմով
Որպէս բուրմունքի, գգւանքի մի ծով :

Եւ անոնք ինկան գիրկը մէկմէկու՝
Ինչպէս հողմավար քռչուններ երկու,
Որոնք ահաւոր փոքրկէ մը վերջ
Կողջունն զիրար հարաւ դաշտի մէջ :

— Նստիր իմ Զէյլա — իմ յոգնած եղնիկ,
Եւ քող զրնգա քո ոսկի ձէնիկ.
Եւ ապրիմ սիրո քաղցր անքշանք —
Մոռցած եւ աշխարհն ու օր ու տանջանք :

— Զարո՛, իմ հզօր, չինարի ծառ ես,
Դու արեւի պէս վառ ու պայծառ ես.
Թող դնեմ գլուխս այդ քիկնեղ ուսիդ.
Եւ մտիկ ընեմ դիւքական երգիդ.
Ինձ շա՞տ են տանջեր լեզուները չար.
Ա՛յ շատ են դաղեր սիրտըս չարաչար.
Կուզեմ ես մոռնալ մի պահ ամեն բան —
Անվերջ քուին ու մուրն ու լացըս դաժան :

— Կարգ չէ այս, Զէյլա, այլ հոտած դիակ,
Լացի ու արեան մի նեխած գետակ,
Ուր տեղ անունով կրօնի, ազգի
Բաժներ են աշխարհն անքիւ բանակի :
Որ անոնք առնեն զէնք մէկ մէկու դէմ,
Որ անոնք զիրար ատեն ու ջարդեն,
Եւ շայատ ապրին մեր տէրերն ահեղ՝
Մաղրելով մեր ցան ու արեան հեղեղ :

Ես դուրս պիտի գամ բուռն եւ համարձակ,
Ուր կա զիւղացի , բանոր կամ մշակ ,
Եւ ըսեմ անոնց՝ իմ ջան , իմ աղքեր ,
Ինչո՞ւ միմիւնանց դէմ կուի էֆ ելեր :
Ի՞նչ է մնացեր որ պիտի բաժնէֆ —
Լոկ լաց ու զրկանի եւ շղթա ու վերք .
Մոռնանի մենի ժամը , մոռնանի մենի ջամին
Եւ մի ճար ընենի մեր անտէր ջանին :
Զէ՛ որ մենի միայն զրկանի ենի տեսած ,
Դառըն աշխատած ու դատարկ նստած .
Թէ՛ որ սրտով ենի ու քաջ տղամարդ —
Մեր տէրերու դէմ պիտի վարենի մարտ :

- Զարո՛ իմ կորին , քեզ ողջ չեն քողներ ,
Քո բուրդը քամուն կուտան այդ շներ .
Ես ալ կը մնամ սգաւոր ուրու
Զարդւած դիակիդ վրա ողբալու :
- Մի լար , իմ Զէյլա , մի լար իմ անգին ,
Խելքի պիտի զա ուենջբարն իր կարգին .
Եւ կուռ շարքերով ու միախորհուրդ՝
Պիտի ազատէ ամեն ժողովուրդ :
- Բայց Զէյլան կուլար բուռն ու անխնա
Կարծես իր եարի դիակի վրա .
Կուլար , կանիծէր կարգերն այն յիմար ,
Ու սէրը անգամ տանջանի էր անմար :
- Յիշիր դու անյաղը Դաւիթը Սասնա .
Զրկւած եւ անհող գիւղացին է նա ,
Որ պիտի զարնէ քուրն իր կայծակին
Մեր զոռ տէրերու յանցապարտ կրծքին :

XII

Քաղը վերջացաւ . կալի շրջա՛նն էր .
Հեռու սարերէ , արտերէ ամբեր
Գեղջուկն իր բերքը կալ բերաւ մէջքով
Մի կտոր հացի պայծառ տեսիլքով :

Եկեր էր արդէն ահարկու շահնան⁽¹²⁾
Ժողովու մնջիչ հարկը տէրութեան .
Հոն էր Ազիզ բեկ , անսիրտ վաշխառուն ,
Տէրտէրն ու հայոց յեղափոխութիւն :

Կերգէր կալէ կալ զրկւած գիւղացին .
— Կան արի , ա՛յ եզ , մեռնիմ քո կանին .
Երբոր կալն ելնի — ինծի քող ցորեն ,
Յարդն ալ կը պահեմ քեզ ձմրան պարէն :

Կա՛լն ելաւ . շահնան տարաւ տասնին մէկ .
Երկուքն ալ տարաւ անսիրտ Ազիզ բեկ .
Մէկին տեղ երեք առաւ վաշխառուն .
Բաժին մ'ալ տւին անյայտ աստրծուն :
Խմբապետն եկաւ ու զինքի հաշւին
Առաւ այն բերքի մնացած բաժին .
Կալին մէջ միայն հոգս ու յարդ մնաց ,
Եւ ամենուն բախիծ եւ օրեր անհաց :

Նա՛ , որ յուսակառ հողերն էր հերկած ,
Գիշերներն անքուն իր ցանքն էր պահած ,
Հասկերն էր օծած առաս քրտինքով —
Տուն դարձաւ անյոյս եւ դատարկ ձեռքով :

Դեռ ձիւնը չեկած — քաղաքի նամբան
Պիտի նետուէր նա հառաչի նման .

Ու գրաստի պէս նա ձմեռն ամբողջ
Պիտի ծառայէր հասած թիրու տիրոց —

Որ առկայծ վառէր ճրագն իր հեգ տան .
Ականջին չի գար ողբը իր կնկան .

Ու կանուխ գարնան նորէն երթար հանդ .
Ի զուր վատնելու իր ուժն ու եռանդ :

(12) Շահնա — Կառավարութեան կողմէ բերքերու
հարկահաւաքը

XIII

Դարբին Ավոն շատ հող ունէր ,

Եզ ու ջորի եւ ոչխարներ .

Ունէր հազար մեղրի փեքակ ,

Քանի հոտաղ , քանի մշակ :

Շուրջը ունէր եօթը որդի՝

Շեն որպէս ոսկի գօտի .

Եւ սալն անոր միշտ կը զնգար

Կոելով յոնի , բահ ու մանգաղ :

Նա՛ էր միակ վարպետ դարբին

Մի քառասուն գիւղի միշին .

Շա՛տ յարգ ունէր , անո՞ւն ունէր —

Մեծ համբաւի ու ոսկու՝ տէր :

Ու մէկ հատիկ աղջիկ ունէր՝

Մաւի աչքով ու շիկահեր ,

Պահւած աչքի լոյսի նման

Ինչպէս բարդի ելած փարքամ :

Անոր տան մօն՝ խարլսուլ , քշւառ՝

Քուրդ Հասոյի խրնիթը կար .

Կինը — Խաչէն ալ հացրերան

Գործերն կընէր Ավոյի տան :

Եւ Ռաշիդը — Փոքր տղան —

Մօր հետ կուգար իբր օգնական .

Ու Մարոյի հետ անդադար

Երգ կը կանչէր ու կը խաղար :

Նա ձայն ուներ մեղրածորան՝
Յորդ ջրերու երգի նման.
Կերպէր վէպէր — «Լէյլի-Մէջնուն» ,
«Խաչազարէն» ու «Սասմա տուն» :

Անոր յառած անհուն աչքեր՝
Մարոն յուզւած մտիկ կըներ .
Թէ ի՞նչ քաջ էր այն մրայոն
Շքեղ հեծեալն՝ Սիամանքոն :
Կամ ի՞նչ մեծ էր Մէջնունի սէր ,
Որ Լէյլային սպասեր էր
Վարդավառէն մինչեւ գարուն
Լնի ափին՝ անհաց , անտուն :
Կամ ոնց հեծած հրեղէն ձին ,
Զեռքը բռնած քուր — կայծակին .
Սասմա Դաւիթ կուի կերքար
Խեղն գիւղացու դատի համար :

Ա՛յ , մանկութիւն դու լուսաքեւ ,
Արծուն՝ արագ , հովկն՝ քերեւ
Կանցնիս կերքաս անվերադարձ —
Խաղ ու երազ անհետ փշրած :



Վրնջան արաք ձիերու նման՝
Անցան տարիներ անմեղ մանկութեան .
Բայց դեռ Մարոյի յուշերուն մէջ վառ՝
Ռաշիդի ոսկի ձայնը կը զնգար :

Իրեն կը քւէր որ վէպերն այդ հին —
Սիրով կարկաչուն , հեւբով՝ ողբազին
Ռաշիդն իրական կեանի՛ էր հիւսած՝
Ցաւով ու լացով ու արիւնով քա'ց :

Եւ ի՞նչ է սէրը — կարօտ , յիշատակ .
Յաւէտ բռնկող բոցեղէն փափաք ,
Որի դէմ կրօնն ու անսիրտ տէրեր՝
Ահեղ ու անհաս պատւար են ժաշեր :

XIV

Մարոն՝ հիւսած ծամը դեղձան՝
Ճակտին՝ ոսկի, վզէն՝ մերջան՝
Ժամը կերպար իր մօր կողքէն
Կաքւի նման շորորալէն :
Երբ մթնշաղն կիշներ խաղաղ՝
Մարոն ժամէն տուն կը դառնար .
Լուսնակն ինչպէս սարի տակին՝
Վառ ժպիտը աղւոր դէմքին :

Ու Մարոյին՝ քա՛նի մէկ մայր՝
Հարս էր ուզեր որդու համար .
Մէկին՝ «աղջիկ չունինք տալու ,»
Մէկին՝ «չենք տար աղքատ մարդու ,»
Մէկին՝ «դեռ փոքր է երախան»
Տւին վճիռն ու պատասխան .
Եւ սեւ սրտով նամրեցին տուն . . .
— Տէրըդ մեռնի , աղքատութիւն . . .

Բայց հէնց եկաւ կինը ռեսին
«Տիրոջ կամքն է եղեր ըսին ,
«Որ զոյգ տներն մեր հնամի
«Լինեն սիրով եւ խնամի» :



Եւ մեծ շուքով — պարով , խաղով ,
Թէ հայ քէ քուրդ երգով , տաղով ,

Սիրուն Մարոն նշանեցին
Ուս Յովանի քոքով տղին :

Եկաւ քեկը վայել փառքով .
Եկաւ, նստաւ Յովանի քով .
«ԱՇ ուս բաւ, այդ ի՞նչ մալ է ,
ԱՇդ ինչ կաֆաւ ու մարալ է» :

Տէրտէրն ըսաւ, «Յովան, օրհնա՛ծ,
«Տունը միշտ շին պահէ Աստա՛ծ,
«Հարսող նախշուն եղունի՛կ է ,
«Ուկի քեւով քիթեռնիկ է . . .»

Մոլլան ըսաւ, «Գրու քէռխվա՛,
Հզօր տունը կանգուն մնա ,
«Ալլահն պահէ ազիզ որդիդ
«Ու չի պակսի հացը տաշտիդ» :

Գզիրն եկաւ շատերու հետ
Ողջունելու իր տէրն ու պետ .
«Թող որ անի քիւը քո տան ,
«Աքրահամու ցեղի նման» :

▲

Բոներ էր գիւղի հինաւուրց մէյդան
Բազմութիւնը մեծ՝ խեղն, զրկւած դասին .
Կը հնչէր անվիրջ հարց ու պատասխան
Խօսեցեալներու եւ սիրո մասին :

- Ինչո՞ւ Աւոյի աշկերտ Մհերին ,
«Աղջիկը փոքր է» ըսին, չի տւին .
- Ինչո՞ւ Բոզոյենց էն հոտաղ տղին
«Աղքատի աղջիկ չենք տար» վնոնցին :

- Ուկի որ կտրի էդ ուսի որդին
Արժէքը չունի անոնց եղբնգին. —
Մի աղքատ ռենցրար տւաւ պատավան.
Եւ անոր խօսին ամրոխն էր հաւան :
- Իմ աղքե՛ր, ըսաւ ծերունի Զնդին,
Այսպէս է հիմա կարգը աշխարքին.
Մեր ժողովրդի իմաստուն խօսով,
«Ուն՝ իրեն ոտքով, գառն՝ իրեն ոտքով» —
- Բայց սէրը սրտի բա՛ն է, ա՛յ Զնդի .
- Խոլ նա հարուստ է եւ ուսի որդի .
Ու քանի դեռ կան այս կարգն ու բարքեր —
Աղքատ մարդն ունի ո՞չ պատիւ, ո՞չ սէր . . .



Ռաշիդն էր եկեր ու կերգէր յուզւած՝
Հէյրան - Զէյրանի կարօտը անսանձ,
Եւ սէրը անոնց անմահ ու բուրեան
Անցեալէն փր-բող ծաղկոցի նման :

- Հէյրա՛ն, Հէյրա՛ն . . .
- ին սեւ քարէն որ ջուր կուգա,
ի՛ն իմ սիրտն է — արիւն կուլա.
Ամպն, որ կախւեր քուլա քուլա,
ին իմ դարտն է սրտիս վրա :
- Զէյրա՛ն, Զէյրա՛ն . . .
- Դու հազարան բլրուլի պէս
Հոգուս մէջն ես բացեր պարտէզ .
Ուր քո սէրը միշտ անքառաւ
Պիտի ծաղկի վարդի նման :

Այդ շքեղ ճայնը Մարոն կը կանչէր,
Մարոյի համար երգն այդ կը հնչէր.
Իսկ Մարոն զապած հեկեկանքն ու լաց
Շարբարի քասը ձեռքին դրաւ ցած :



Հիւրեքը բոլոր մէկ մէկ հեռացան .
Զարկաւ գիշեքն իր աստղահիւս վրան .
Ու մանկութ սէրը հոգու մէջ անմար՝
Մարոն մուրի մէջ դեռ կը հեկեկար :

Եւ առաւ մայրը գլուխն աղջըկան
Ոսկեթել բանւած իր ուսին վրան .

- Սեւալո՞ր աղջիկ, բաւ է արտասես,
Բա՞ւ է մըի մէջ արեւըդ մաշես .
Մեր զլսին բո՞ւ ես դարձեր դու գուժկան,
Սեւ պիտի բերես տանըդ հայրական :
Ի՞նչ եղաւ ֆեզի, չար ա՞չք դպաւ ֆեզ .
Ըսէ՞՝, մէկ հատիկս, դու ի՞նչ դարտ ունես :
- Մատաղցու գա՞ռն եմ իմ ծնած օրէն,
Սեւ բախտը գրած — կապած իմ վզէն .
Հազիւ բացւեցա վառ վարդի նման
Ինձ նողակոտոր ըրին ու տարան :
- Առ’ս եղիր, աղջիկ, մեղա՞ ֆեզ, Աստւած .
Ա՞յ, դու ապերախտ, դու ծամը կտրած .
Ո՞ր մէկ աղջիկն է ֆեզ պէս բախտաւոր —
Ուսի հարսնցուն — հայրդ՝ ունեւոր :
- Զբուէր այդ տունը եւ իմ հօր ոսկին
Որին զոհ կերպա իմ կեանքն ու հոգին :

Ես ոչ մանգաղ եմ, ո՛չ խոփի, ոչ կացին,
Որ տանեն ծախեն հասած գնողին :

- Մարո՛ այդ կա՛րգն է, Աստըծու պատւէք .
Ադամի օրէն այդպէս է եղեր
Ու պիտի երբա յաւիտեան այդպէս
մի չար դիպւածի, վշող քամու պէս :
Բոլորս ալ ունինք մեր նակատագիր —
Առանձին նամրա, տարբեր վազք ու ծիր,
Եւ նա է արդար, նա է իմաստուն
Որ կապրի հլու միշտ իր մեծերուն :
- Բայց սա՛ իմ գիրը սե՛ւ է, մայր անգին .
Սիրտըս՝ փշրած կուժ՝ վառ սիրոյս նամրին .
Ի՞նչ ընեմ ես այս քանդւած սրտիս հետ .
Աչքերս դարձեր են պղտոր լացի գետ :



Շատ էք կարօտցած Մարոն Ռաշիդին,
Յուզուղ եւ քախծոտ այն աղւոր դէմքին .
Ինչե՛ր չէր տար որ իր կողքին, նորէն,
Քակէր նա վէպի իր դիւքիչ հիւսկէն :
Բայց մտքերուն մէջ դաշոյնի նման
Միսւած էք իր հօր պատւէրը դաժան .
«Թէ՛ մէկ ալ խօսիս այդ լակոսի հետ,
«Կը կտրեմ լեզուդ, կը նետեմ քեզ գետ» :

- Թոչուն լինէի եւ քեւ առնէի,
Ռաշիդի բանած հանդը քռնէի .
Նստէի ուսին, մնչէի անոր —
«Շա՛տ եմ կարօտեր քե՛զ իմ հեռաւոր» :



Մարոյի դեմքը հուր ու արեւ էր,
Մարոյի աչքերն՝ ահարկու նետեր .
Ռաշիդն ալ սիրտն էր բռներ արխնոտ՝
Հոգուն մէջ քախիծ եւ անհուն կարօտ :

Դուցէ Մարոն ալ այն լինէր իրեն
Ի՞նչ եղան Լէյլան ու Խաչազարէն՝
Անբախտ Մէջնութին, Սիամանքոյին —
Բոցեղէն մի սէր եւ մա՞հ ցաւագին :

Ու կեանքն ալ, որ կա, մի անյայտ օ՞ր է .
Մէկին մուժ՝ մէկին ալ լուսաւոր է .
Աւելի արժէ մի սիրո վայրկեան
Քան մոայլ, անսէր մի մեծ յաւիտեան :

Գժւե՞ր էր արդեօֆ, այն ո՞վ էր լսեր
Այսպիսի յիմար — անհնար մի սէր .
Զէ՞ որ նշանած աղջիկ էր Մարոն —
Նրկուժի միջեւ կար ազգ ու կրօն . . .

Բայց սէրն ալ որ կա տե՞նչ է բոցակէզ —
Հրեղէն քոչո՞ւն դիւքիչ, իրագէս .
Քաղցր ու ահարկու, անմար պատուհաս,
Յաւիտեան՝ անմեռ, յաւիտեան անհաս :

XV

Դավուլ – գուտնա հնչեցուցին,
Աղջիկ, տղա կայնեցուցին,
Եւ սկսաւ գրաքք շուրջպար —
Բեկի տունը այն օր նա՛շ կար :

Հիւրն էր տանիկ գաւառապետ,
Օգնականի եւ զօրքի հետ .
Որ գեղջուկներն լաւ իմանան
Ահեղ ուժը թիւրք տէրուք-եան :

Դրեր էին հարուստ սեղան՝
Հազար տեսակ բարիք վրան .
Հաւ, սեր ու մեղր ու խորոված —
Մրգեր, շարբար եւ լավաշ հաց :

Եւ մեծ հիւրի, բեկի համար
Դեռ կը դառնար լեռնական պար —
Աշխոյժ ինչպէս փրփրուն գետակ,
Ծփանքներու պէս ներդաշնակ :

Ապա երգեց Ռաշիդն աղւոր —
Վէպերէն հին, երգերէն նոր —
Ինչպէս սարէն կարկաչող ջո՛ւր,
Պաղատանէի նման՝ տխուր :—

Մարոն յուզւած մտիկ կընէր .
Երգ չէր կարծես — այլ հատնում էր .
Անոր ջահել սի՞րտն էր ըսես
Քակւեր արևոտ կծիկի պէս :

Երգ չե՛ր — ցաւ ու հեծեծա՛նք էր .
իր խենք սիրո արագանքն էր .
Եւ անզուսպ լացն աչքերն խուժած՝
Դուրս նետւեցաւ Մարոն յանկարծ :



Խոկ գիւղի մէջ ողբ ու ծեծ կար .
Ամեն մէկ տան մէկ մէկ ասկեար
Բաժին հանած էր ուս Յովան —
Մէկ մէկ իշխան , մէկ մէկ գաղան :

— Դէ՛ , հա՛ւ բերէֆ , փիլա՛ւ բերէֆ ,
Զիերուն խո՛տ , գա՛րի բերէֆ ,
Հարսը քող գա , շոկէ սեղան ,
Բարձե՛ր բերէֆ , նատեմ վրան : —

Ու կսկսէր տո՛ւր ու տփոց
Եւ աղաղակ եւ լաց ու կռծ .
Ու մինչեւ լոյս՝ սարսափահար
Անոնց աչքին քունք չեր գար :

XVI

Գետի այն կողմը, ուր անտառն էր խիտ,
Մարոյին գտաւ իր սիրած Ռաշիդ.
Եւ մեղմով դպաւ այն քննուշ ուսին —
Լացող Մարոյի վարարող ուսին —
Գիշերն՝ բուրմունք էր, բոլոր էր լուսնակ.
Եւ գետը բաշովն իր փրփրակուտակ՝
Կարշաւէր խռով՝ մի երգով ահեղ —
Անոնք դէմ դէմի կանգնած սիրազեղ:
Եւ գրկախառնում, եւ ժպիտ ու լաց —
Երկու հրարուխ մէկէն բռնկած.
Եւ այդ բոցավառ, բուռն սիրո առաջ
Եւ վախ, եւ կապանք ըրեր են նահանջ:

— Ա'լ ետ չենք դառնար մեր տառապանքին,
Չենք զոհեր մեր սէրն ուրիշի կամքին —
Ըսին եւ առին փախուստի նամբան,
Հեռու, անմատոյց մի բարձունք հասան:
Վիթխարի ժայռեր ելած չորս բոլոր,
Վարն անդունդն էին ու ճորերը խոր.
Մենաւոր մի ծառ եւ մի պաղ աղբիւր —
Դաշն որպէս սրինգ — սիրո պէս մաքուր:
Վարը՝ արածող գառներն ու ոչխար՝
Փուած վզմոցի պէս մարգարտաշար.
Եւ Զարոն՝ առած սրինգը բերան՝
Կածէր իր սիրո տրտում շարական:
Մի ժայռի նեղքէն գիւղը կերեւար,
Եւ ծուխն, որ կելնէր մեղմ ու օդապար.
Հեռու, ճորն ի վար գետի լոյծ իրան՝

Դալարւած հսկա մի օձի նման :

Ուաշիդը վնուեց Զարոյին երբալ
Եւ իրեն սիրո գիրքն անոր բանալ .
Իրնեց վիճակին նա՛ կը հասկնա —
Չէ՛ որ ողջ գիւղի դէմ ցցւեր էր նա .

Մարոն սրտատրոփ՝ վերէն կը դիտէր .
Ե՛տ կանչեց Զարոն յարձակւող շներ .
Սրտագին ողջոյն . . . խօսքերու հեղեղ —
Քաշւեցան տակաւ մի զով , ծածուկ տեղ :

- Ուաշի՛դ իմ աղքեր , շատ է դժւարին
Անսովոր սիրո այս անկոխ ուղին .
Ես ալ կը քալեմ — սակայն ամեն օր
Հոգիս կը խոցեն իժերն թունաւոր :
- Դէ՛ , անշուշտ մի օր կը լոեն կիրքեր —
Եւ գիւղ կը դառնանք — աղքատ տունը մեր .
Եւ կամ կը գարնենք կերպանք մինչեւ Վան
Այն տեղ նարելու գործ ու ապաստան :
- Բարով դուք հասնե՞ք ձեր նպատակին ,
Բա՛ց է ձեզ համար իմ սիրտն ու հոգին :
- Աստւած քո սրտի համաճայն տա ֆեղ ,
Բարով վառ սիրուդ , մուրադիդ հասնես . . .

Ետ դարձաւ Ուաշիդ՝ հետք հաց ու կար
Եւ յոյս եւ կորով եւ սէր խանդակաք .
Ու մի ողջ շարաք այս վէս բարձունքին
Խմեցին անոնք սիրո հուր գինին :

Գգւանք ու խաղեր . . . յետո խօսքեր լուրջ .
Ծովափմեա քաղաք . . . եւ շքեղ անուրջ .

Թախիծ ու հատնում . . . վախ ու հեկեկանք .
Ու նորէն համբոյր ու նորէն գգւանք . . .



Երկինքն էր փլեր ծեր ուստի գլխին —
իր տան հարսնցուն փախա՛ծ քրդի հետ .
Չե՛ նա իր որդուն ալ չէր յարմար կին ,
Օժի՛տ թէ տային անոր ոսկի գետ :

Եւ կինը նամբեց — նշանն ուզեց ե՛տ ,
Որ իր տան պատիւն անաղարտ մնար .
Պատի՛ւն , որ նա եւ պապերն իր բանգետ
Շահեր էին բիրտ բռնութեամբ յամառ :

Ավոն կատղեր էր , Ավոն էր գազան —
Զար ու ոլսակալ , վայրագ ու դաժան .
Խսկ մայրն ալ անվերջ կուլար ու կրսէր ,
«Մարոյիս մեռնեմ , սո՞ւրբ է անոր սէր . . .»

Ժողով սարքեցին պետերը հայոց՝
Սրտերը կրքի , վրէժի հնոց .
Պէտք էր Ռաշիդը՝ նոխազը դառնար
Հայ կնոջ պատի սրբութեան համար :
Տէրտէրը բերաւ խաչն , Աւետարան .
Ու երդում ըրին — մի երդում դաժան —
Իրենց ուսերէն զէնիք չի դնել վար
Մինչեւ Ռաշիդի մքնէր օրը վառ :

Խսկ պառաւ Խաչէն իր տունն էր մտած՝
Սիրտը մորմոռով եւ ահով պատած .
«Այս ի՛նչ ձիւն բերիր , մօրդ գլխին , որդի՛ ,
իմ ոսկի ձայնով , ջան իգիր որդի՛» :



Եւ դաժան մի մէգ իջեր էր գիւղին,
իջեր, ծածկեր էր հանդերն եւ ուղին.
Մէգի մէջ երկու ազգեր հարեւան
Զայրուրով ելած միմնանց հանդիման :



Մի տղա անսիրտ ու նենց որպէս օձ՝
Տեսած էր անոնց սարի քազսոց.
Եւ հայ զոշերուն պատմած էր խւկոյն —
Խումբն ելաւ նամբա ադամա մթուն :
Եւ սարի կողէն՝ գողերու նման՝
Զգոյշ եւ անձայն ժայռերը ելան :
Ազրիւրի ակին, այն ծառի տակին
Փուած էր անոնց խոտէ անկողին :

Վեր ցատկեց Ռաշիդ, տեսաւ լուսնի տակ
Մի խումբ՝ ձեռքն առած զենքեր ու դաճակ՝
Վատօրէն իրենց վրա կը խուժէր :
Մարոն ալ արդէն ոտքի էր ելեր :

Զէնքի մի պայքուն . . . ու Մարոն նչաց,
Ռաշիդն էր ինկեր կուրծքէն զարնւած .
Խլած Ռաշիդի արխւնոս դաշոյն՝
Խոմբի դէմ ցատկեց հէգ Մարոն խւկոյն :

Մէկալ քարացած կեցաւ լուսնի տակ՝
Հոգին սարսափի մի ծով անյատակ .

«Հայե՞ր են, կանչեց, դրացի, նանչւո՞ր . . .
«Կուրծքն ալ պատուեցէք, սի՞րսու ալ վիրաւոր :
«Չեզ կ՞նչ էր ըրած ա'յս շեն տղան,
«Աղքատ այս մշակն ու լաւ հարեւան .
«Հայ կնոջ պատիւն թէ փրկիլ կուզէք —
«Բեկի դէմ պէտք էր ուղղէիք ձեր զենք» :

Մէկ մը Ռաշիդի վրա կը նետուէր,
Մէկ մը իր արձակ մազը կը փետուէր .
«Վե՞ր կաց, քաղցրախօս իմ կտրին Ռաշիդ,
«Վե՞ր կաց, ես մեռնիմ կանաչ արեւիդ» :

Եւ այս անպաշտպան աղջկա դիմաց
Կայնած էր խումբը շփոք-ու պարտած .
Խոկ նա լալագին եւ խելացնոր
Կը դառնար անդուլ ցնցումով մի նոր :

— Ա'լ բաւ է Մարո՛, նչաց խմբապիտ,
Ի՞նչ ունիս քրդի այս լակոտի հետ .
Շո՛ւն է ազգն անոր եւ թունաւոր ի՛ժ .
Աստըծուն մեռնիմ, գտաւ իր պատիժ :
Վա՛տ է քո լացը եւ վիշտդ՝ տգեղ,
Գետին կը մտներ ով լիներ քո տեղ .
Անգղերուն յանձնէ դու քո սիրական —
Բլրուկի ձայնով այդ լիբբ սրիկան :
Խոկ դո՛ւ ժամ գնա, աղօքիր ու լա՛ց,
Գուցէ քեզ գը-ա ողօրմած Աստած
Եւ սրբէ անջինջ մուրը նակատէդ,
Այն որ հօրդ տանը քսեցիր յաւետ :—

Մարոն նայեցաւ մի պահ այդ խմբին,
Մ'կ ալ իր անշունչ պառկող Ռաշիդին,
Կարծեց զայլերու վայրազ վոհմակն էր
Ունալով իրենց վրա յարձակւեր :

Ու ե՛տ, ե՛տ փախաւ՝ գայլերն ետեւէն .
Մ'կն իրեն հասաւ ու բռնեց փեշէն .
Մարոն՝ սարսափին, ցաւէն խելագար՝
Իր կուրծքը խրեց դաշոյնն այն պայծառ :



Երբոր բացւեցաւ ոսկի լուսաբաց՝
Գիւղին մէջ փրքաւ աղաղակ ու լաց .
Երկու ծեր մայրեր սեւ լաքեր հագան,
Երկու ժողովուրդ միմիանց դէմ ելան :

XVII

Մերկ ու վիք-խարի մի ծեր ապառաժ
Կալսւեր է դալար մի մարզի վրա,
Ուրկէ կը բղխի աղբերակ մը խաժ,
Շուրջն ալ՝ դարաւոր մի անտառ հսկա:
Ապառաժի տակ՝ քարակոյտերէ
Ելած է մի պատ կիկլոպեան դարի .
Հոն՝ գիշերները գայլէ, գողերէ
Կը պատսպարւէր հօտը ոչխարի :

Այնուե՞ղ էր նորէն հօտը մակաղած՝
Այն խարտեաշ աշնան խաւար գիշերով .
Հովիւն ու Զարոն դէմ դէմի նստած՝
Վառող խարոյկի ոսկեփայլ լոյսով :

Եւ մի ֆիշ հեռու շները արքուն՝
Աչքերով մուրը կը խուզարկէին .
Մտիկ ընելով հովի սոյլերուն,
Անտառի հեթին եւ գետի երգին :
Վառող խարոյկի բոցերու ներքեւ
Բռնկեր էին դէմքերն այդ երկու՝
Յնցող յուզմունքն դէպքերուն այն սեւ
Եւ մքով գործւած ոնքին ահարկու :

— Այ իմ ժողովուրդ, դարերով տանջւած,
Դու ինչո՞ւ մտար անմեղ արեան տակ .
Այդպիսի ոնքի վեպով են երգած —
Այդպէս ահաւոր եւ անօրինակ :

Հաւատա՛, հովիւ, այնտեղ լինէի
Կուրծքը կընէի ես ամուր վահան,
Քարով, բռունցքով կը ջախչախէի
Գանկերն անոնց չար, ձեռքերն մարդասպան :
Ա՛լ ի՞նչ երեսով մէկմէկու նայինք,
Եւ ինչպէ՞ս ուտենք մենք իրարու հաց .
Մեր հոգուն իշած ծանր նախատինք,
Ալ ո՞չ հարեւան, ո՞չ նանչւոր մնաց :

— Եւ այդ սկիզբն է, լոկ, Զարո՛, որդի ,
Այսօր մքի մէջ կը մղենք պայքար .
Վաղը լույսով է որ կուինք պիտի —
Արեան ծովի մէջ խեղդելու զիրար :

Շները յանկարծ տեղէն ցատկեցին
Եւ կատաղօրէն առաջ նետւեցան .
Հովիւն ու Զարոն մի ժայռի ետին
Մտան՝ սեղմելով իրենց հրացան :
Այն կողմն, ուր շներն էին յարձակած՝
Պայքեցան զէնքեր, ե՛ւ կանչ, ե՛ւ աղմուկ .
Մինչ դիրքի ետեւ սողալով կամաց
Մի խումք կայսեցաւ մքի մէջ ծածուկ :
Եւ մէկէն զարկող կայծակի նման
Իշան հարւածներ անխնա եւ շատ .
Դժբախտ հովիւներն՝ նոյնիսկ չի կրցան
Թշնամու դէմ զալ նակատ – առ նակատ :

Եւ դիրքերու մէջ՝ ջարդւած, արիւնուտ
Ու մարած քողին հովիւներն արի .
Քշեցին, տարան գիւղի անտէր հօտ
Մքին կողերէ այն Արնոս սարի :

Վիրաւոր Զարոն երբ եկաւ ուշքի՝
Զգաց որ ձեռքը դատարկ էր ու պա՛ռ .

Դէմֆն էր ողողւած արիւնով վէրքի,
Մօսն ալ հովիւր պառկեր էր խաղաղ :

Եւ յիշեց արագ դարձող դէպքերն այն —
Շներու հաջոցն ու զէնիքի պայքիւն,
Վազգը դէպի դիրք՝ ձեռքին հրացան,
Մի ժանր հարւած . . . ապա լուրքիւն :
Շուրջը նայեցաւ . դեռ խարոյկն էր վառ՝
Պայծառ բայց շիշող մի յոյսի նման,
Եւ մուրքն էր կախւեր ծանր որպէս կապար,
Կը լսէր միայն աղբիւրն ողբաճայն :

Գրկեց հովիւր, տարաւ ջրի մօս —
Խարոյկի լոյսը վրան էր զարկեր,
Լւաց վէրքերը եւ դէմֆն արիւնոտ
Մինչեւ նա մեղմով բացաւ իր աչքեր :
Վէրքերու վրա դրին խանձւած բուրդ
Եւ շապիկներէն առին վիրակապ .

— Գնա՛ արքնցուր գիլտն ու ժողովուրդ,
Վազի՛ր, Զարո ջան, դէ՛, վազի՛ր շտապ . . .
Գողը տնէն է — այն ալ տանուտէր .
Ամեն քայլ կարգին չափւած ու ձեւած .
Բայց նա չո՛րս ոտքով քակարդն է ինկեր,
Եւ անկէ պիտի չելնէ անկասկած : —



Հավա՛ր ելէֆ, հօ՛տը տարան . . .
Կանչեց Զարոն ձայնով ուժգին .
Ու տնէ տուն «տարա՛ն, տարա՛ն»
Հնչեց տխուր, ողորմագին :

Ո՞վ զէնիք ունէր — զէ՛նիք առաւ հետ .
Ո՞վ զէնիք չունէր — բահ ու մանգաղ,

Ելաւ որպէս մի Վարար գետ
Ժողովուրդն այն հեզ ու խաղաղ :

Երբոք հասան ծեր հովկի մօտ՝
Նա զայրոյթէն նստած կուլար,
Բարի դէմքը դեռ արիւնոտ,
Եւ ջարդըւած եւ ուժասպառ :

— Բաց կա միայն երկու նամբա —
Մէկը՝ հովտէն դէպի Բարվար,
Մէկն ալ ուղին է այն Տափա
Արնոս սարէն՝ Մոկաց աշխարի :

Զարո՛, Տափա ուղին դու առ
Քաջերու հետ արագ, անվախ .
Մէնք ալ կիշնենք դէպ զառ ի վար
Մէզ հետ առած բահ ու մանգաղ :



Զարոն հետն առաւ քառսուն տղամարդ
Թէ՛ հայ եւ ք-է քուրդ առանց խորութեան,
Ճամբան զառ ի վեր, ճամբան էր անհարք —
Ու կը վազէին փոքորկի նման :

Բլրի մը վրա իր Զալոն տեսաւ —
Իր հաւատարիմ եւ հուժկու շունը,
Լեզուն՝ դուրս ինկած, արիւնաբարաւ,
Կոպերուն շա՛տ մօտ՝ անվախնան քունը :
Զարոն որ տեսաւ կաղկանձեց տխուր
Եւ հազիւ շարժեց իր պոչը բրդուտ.
Ուզեց վեր կենալ — բայց աւա՛զ, ի զուր .
Ու Զարոն նստաւ իր մեռնող շան մօտ :

Սարի ետեւէն ելած էր լուսին .
Երկուքի աչքէն արցունիք էր կախւած .
Մէկն էր անձնատուր տխուր օրհասին ,
Մէկն ալ յուշերու կծիկն էր ժակած :

Եւ քողին Զալոն այն բլրի կատար ,
Ու սարի հովը շնգշնգա օրօ՞ր .
Նա կեանքն էր զոհած գիւղացու համար —
Մի պայքարի մէջ զոռ ու ահաւոր :



— Ինչո՞ւ ժանգոտ է ամեն մէկիդ դէմք ,
Ինչո՞ւ դուք բաժան — բաժան կը ժակէք —
Քրդերը՝ մէկ խումբ եւ հայերը՝ մէկ —
Այդ է որ կուզեն արդէն ուսն ու բեկ :
Մեր միջեւ դիա՛կ , մեր միջեւ արիւն
Նետեր է անգութ եւ անարդ մի ձեռք .
Այդ դժբախտ տուրքն է մեր նեսգ տէրերուն —
Որ գերեն մեր կեանքն ու խլեն մեր բերք :
Թէ որ մենք հօոր ետ պիտի խլենք
Հերոսներու պէս՝ մեր կեանքի գնով ,
Մենք «զա՛ն» կանչելով՝ մա՛րտ պիտի մղենք
Եւ ընկնենի սիրո յաղթական ժպոռ՛վ . . .

Վերջին կատա՛րն էր եւ վերջին՝ կածան
Դէպի այն կողմը սէգ Արնոս սարի .
Երբ հեռու , հովտի միջին երեւցան
Երկա՛ր շարաններ ժշտող ոչլսարի :
Զարոն պատրաստեց ուզմի ծրագիր .
Բաժնեց ընկերներն երկու խմբերու .

— Տահի՛ր , դու սարի լանջէն յարձակիր ,
Մհե՛ր , բուքի պէս թիկունքէն զարկ դո՛ւ .

Ես ալ Մոլաց կիրճ կիշնեմ իմ խմբով .
կը կտրենի փախի միակ նանապարհ .
Ժայռերու մէջէն , ծառերու շուբով
Թշնամու վրա կելնենի անշմա՞ր :

Ըստ . համբուրեց ամենի մի առ մի .
Ու բոլորն ընկան մէկ մէկու վզով .
Եւ արագ՝ որպէս փայլակ ու ժամի՝
Կուի դիմեցին առտւա լոյսով :

Գիւղի դարաւոր կեանքի ընթացքին
Այսպէս փառաւոր կոխւ չէր եղեր ,
Այդպէս կորո՞վի , այդպէս մոլեգին
Զրոյց իսկ չունին գիւղի աշուղներ :

Դողերն յուսահատ եւ բուռն կունցան ,
Բայց ալ դիմադրել իրենց հնար չէր .

— Քա՞զ է՞ք ու հզօր , ձեր ջանին դուրբան
Մենի վար կը դնենի մեր անզօր գենիեր :

Կանչեց մի դիրքէ Զավուշ Սուլէյման —
Անզէն ու ձեռքը վերքերէն կարմիր —

— Այս , մեզ գող ըրաւ կարիքը մեր տան
Թող մեր երեսին ք-քէ ողջ երկիր :—

Յաղթական խումբը — Զարոն՝ խմբապետ —
Զինաքափ ըրին գողերն այդ քշւառ .
Քշեցին ըերին գիւղի հօտին հետ՝
Գերիներն այդ խեղն ու լեղապատառ :



Կէսօ՞ր էր արդէն, երբ նորէն ոչխար
Շուր դպաւ դէպի ծանօթ արօտներ .
Ու գիւղն հրնւանքէն, յոյզէն լսելագար՝
Մէկ մը կը պարէր, մէկ մ'ալ կարտասւէր :

- Իմ արե՛ւ վկա, խօսեցաւ Մհեր,
Միութիւնն որ կա մեծ է եւ հզօր .
Գիւղացին այսպէս բշւառ չէր լիներ
Թէ իր բշնամին նանաչէր մի օր :

XVIII

Գիւղ դարձան Զարոն եւ իր ընկերներ
Ինչպէս յաղք-ական զօրք ու զօրավար.
Ժողովուրդն ամբողջ դկմն էր գնացեր,
Խանդակաք սիրով, ցնծութեամբ վարար :

Երբ հասան գիւղի մեծ հրապարակ՝
Զարոն բարձրացաւ մի քարի վրա.
Շուրջը մարդկային բարձրացող կոհակ.
Կանչեց յուզմունքով —

— Իմ աղբեր, բրա՞ . . .
Մենք բոլորս՝ ունցքար, մենք բոլորս քշաւոն՝
Դատեր ենք դառըն՝ անհաշիւ դարեր.
Դատեր ենք քեկի, տէրութեան համար,
Մեր ձեռքը՝ դատարկ, մեր տունը՝ աւեր :
Որքա՞ն եղեր ենք մենք խոհեմ ու լուռ
Մեր քեռն է եղած աւելի ննշիչ :
Մեր լացն ու քրտինք քափեր ենք ի զո՞ւր,
Մեր ականջի մէջ է մեռեր մեր նիչ :

Երէկ հունգ ըրինք ու ժողւցինք բերք,
Ո՞րի տուն մտաւ մի բուռ իսկ ցորեն .
Մենք խելագարւած զիրար կսպաննենք —
Երբ մեր մանուկներն «հա՞ց, հա՞ց» կաղերսեն :
Դոներու շեմքին՝ սեւ հազած մայրեր,
Եւ մեր ձեռքին մէջ արիւնու դաշոյն .
Իսկ քեկը այսքան արեան անտարբեր,
Կը ցանէ մեր մէջ նոր կոիւ ու քոյն :

- Հերի՛ք է ոռնաս քաղցած շան նման —
կանչեց զայրագին բեկի մեկ ծառան .
- Լոկ մահը կրնա կապել իմ լեզուն ,
Ո՞ւր մնաց բեկի դռան կապւած շո՛ւն . . .
- Ելան քեզ գիւղի հովիւ կարգեցին ,
Որ դու պատուհա՞ս դառնաս մեր գլխին —
Գոռաց ամբոխէն մի հայ ազգասէր .
Ու շարունակեց Զարոն անտարբեր .
- Մեր դատի համար , մեր հացի համար
Մէկտեղ կունցանե — թէ հայ եւ թէ քուրդ .
Ա՞յդ մեր տէրերուն բնաւ դիւր չի գար . —
Այդ լա՛ւ իմացիր , տանջւած ժողովուրդ :
Ո՞վ էր որ տարաւ ոչխարը սարէն . —
Գողերու մի խո՞ւմբ , թշնամի մի ցե՞ղ ,
Ո՞չ . մեր որք գիւղի տէրերն անօրէն —
Մեր ոես Յովանը — Ազիզ բեկն ահեղ :

Կատղած մի խմբակ վայրագ աղմուկով
Զարոյի վրա յարձակիլ փորձեց ,
Բայց ժողովուրդը՝ բրով ու ձեռքով .
Այդ խմբին տւաւ փառաւոր մի ծեծ :

Կանգնած էր Զէյլան ծեր Զնդու կողքին .
Անսահման յուզմունե իր աղւար դէմքին .
Իսկ պառաւ Սանամ՝ ժամը ծնրադիր .
Աստըծուն կընէր աղօք-ք ու խնդիր :

- Դեռ երբէք մէկի չեմ խօսած ես չար .
Բեկին ու ոեսին ես չեմ զրպարտեր .
Ինչ որ եղեր է թող գիտնա աշխարհ ,
Տահի՛ր , այստեղ բեր դու մեր գերիներ . . .

Եւ ժողովուրդը լուռ, արձանացած
Կը դիտէք գողերն այն սարսափահար.
Ամո՞նիք ալ այդ խեղն գիւղն էին ծնած —
Իրենց պէս զրկւած, իրենց պէս թշւառ:
Բոլո՞րն ալ ծանօթ ու չարքաշ մարդեր,
Ամենին ալ ֆաղցած թէ հայ եւ թէ ֆուրդ.
«Ի՞նչ դեւ էր զանոնիք աւազակ ըրեր»
Հարց կուտար գիւղի շշմած ժողովուրդ:

Խօսեցաւ յուզւած, ալեխառն մի մարդ,
Ամենին ծանօթ Զավուշ Սուլէյման.

— Ի՞նչ որ մենիք ըրինիք անսի՞րտ էր — նամարդ.
Ինչպէ՞ս ես ըրի այս սոսկալի բան . . .

Այս տարի հունաձէն ինձ բան չի մնաց.
Բեկին ու ուստին իմ բախտը լացի,
Ըսին. «քալանիր, ֆեղի կուտանիք հաց».
Տո՞ւնս անօթի էր, ու ես զնացի . . .

Չի մտածեցի — ո՞վ տարաւ իմ թերք,
Ո՞վ խլեց պսուղն իմ դառն վաստակի.
Զարո՛, օրհնւէր հզօր քո այդ ձեռք,
Անոր հարւածն էր ինձ բերաւ ուշքի:

Դեռ հերիք չէին այն հողերն ընտիր,
Որ խլեր էին գիւղացու ձեռքէն,
Բաւ չէին այնին հօտերն ու նախիր,
Եւ մեծ բաժինն գիւղացու թերքէն,
Հիմա ալ ինձ պէս անքախտ մարդերով
Կը գողնան գիւղի ապրուստը վերջին.
Որ մեր դռներուն նստին հոգսն ու սով
Ու հացի համար ծախենիք մեր հոգին:—

Կը վագէր լացը այսերէն իր վար
Կրակի այրող դառնուրեսմբ վարար .
Անոր հետ կուլար ամբոխն այդ աննար՝
իր ողորմելի , որք կեանքի համար :

— Մենի շատ ենի լացեր , գոռաց Սուլէյման ,
Ա'լ ժամն է հասեր բռունցի , զարկի .
Ելնենի , ժողովուրդ , կուռ ու միարան .
Ուժով տէր դառնանի մեր կեանքի , ինչքի :
Ելնենի մեր պատի , մեր հացի համար —
Մենի հիմա ո՞չ հա՛ց ունինի , ոչ՝ պատիւ .
Մէկտեղ մենի քաջ ենի հզօր , անհամա՛ր ,
Մեր շարքերը՝ կուռ մեր շարքերն՝ անքիւ :

«Երբ-ա՛նի» նչաց ծերուկ Զնդին ,
«Երբ-ա՛նի» կանչեց մի պառաւ կին :
Եւ մարդ ու կին , տղա ու ծեր
Բուռն ու անզուսպ եւ անհամբեր՝
Պահանջեցին «Երբ-ա՛նի , երբ-անի . . . »

Մահակ ու զէնի , բահ ու կացին
Կը նոնային սպառնագին .
Կորած էր ֆէն , կորած էր ա՛հ ,
Եւ ժողովուրդն մեծ ու անմահ
Ելաւ կուի կարմիր նամբա :

XIX

Առջեւէն ինկած Զարոն ու Զավուշ՝
Բազմուքիւնն՝ որպէս բարձրացող հեղեղ՝
Փոքորկած մի նոր խենքուք եամբ անուշ՝
Կարշաւէր դէպի բեկի տունն ու տեղ :

Ինչպէս ոք կելմէ բուքը ահաւոք՝
Աշնան տերեւներն քշելու համար,
Ելած էր ամբոխն այն հեղեղաւոք —
Երէկի ստրուկն ու ռենցբարը համր :

Կանգներ էր շքեղ այդ հզօր հսկան՝
Տէրերու լուծէն եւ երկիւլէն զերծ .
Ցցեր էր ահեղ եւ սպառնական
Հարւածող բազուկն իր շղթայազերծ :

Գոռ բեկն էր նստեր վերի պատշգամ .
«Ի՞նչ է պատահեր» նա կը մտածէր .
«Կամ ապերախտ են եւ կամ անզգամ
«Այս ողորմելի եւ երկչոտ նորտեր» :

— Պետո՛, տղաքը դու պատրաստ պահիր
Այս ծոերու հետ ընենք մի քիչ խաղ .
Ներկենք բլուրը արիւնով կարմիր ,
Որ սովրին լինել խելօֆ ու խաղաղ . . .

Եւ կը բարձրանար ամբոխն այն յուզւած՝
Ինչպէս ովկեանը մբրկի պահին .

Նրբ բեկի վարձկան ուժերը յանկարծ՝
Ծածուկ տեղերէ խիստ կրակ բացին։
Կանգ առաւ ամբոխն ինչպէս մի կոհակ,
Որ պիտի նետուի ժայռերու դիմաց։
Ճռնացին ուժգին բահերն ու մահակ։
Նորէն սկսաւ բուռն առաջախաղաց։

Ու վերքը կրծքին՝ վարդերու նման՝
Այն զռո կուին մէջ քանինե՞ր ինկան։
Բայց ոչինչ կրցաւ փակել արշաւն այն՝
Այդ հեղեղաշունչ, ահեղ բազմութեան։

Նրբ մութը իջաւ, նորէն այն գիշեր
Մարած էր արդէն աստղը բեկի տան։
Հետն առած ուսուր, ինչքերն ու յուշեր՝
Սարի այն կողմն էր գտած ապաստան։

Լոյսը չի բացւած՝ մեծ սո՛ւմն էր լքւած՝
Անհնար ու վառ երազի նման։
Սարսափի նման՝ դռներն էին բաց,
Ամեն կողմ դեռ բաց՝ հետքերը արեան։

Բացին ամբարներն հսկա ցորենի
Եւ մառանն իւղով ու մեղրով յորդան։
Բաժին հանեցին ամեն մէկ տունի
Գոյքերը ուսի, Ազիզ բեկի տան։

Քանդեցին ամեն դուռ ու պատուհան,
Յետո երդեհի տուին այդ տներ։
Բայց անոնք՝ որպէս բռնութեան նշան՝
Սեւցած պատերով կանգուն էին դեռ։

XX

Զէին լսմած — գինով էին,
Հարսնիք չկար — կը պարէին.
Եւ կը զնգար քաղէ ի քաղ
Հպարտ գիւղի երգն ու ծիծաղ :

Աշուն էր լսած ու գունագեղ —
Վառ գոյներու դիւքիչ հեղեղ,
Եւ սարերու սէգ կատարին
Նոր էր իջեր ձիւնն առաջին :

Հաւաքւեր էր գիւղի մէյդան
Ամբոխն այն քաց ու յաղթական .
Եւ քրվուն ու լսելայեղ
Թափ էր առեր պարը շքեղ :

— Ելէֆ, տեսէֆ
Ո՞վ է կերեր մեր էծը —
Կրան, չալիկ մեր էծը :

— Ելան տեսան
Գէլն է կերեր մեր էծը —
Կրան, չալիկ մեր էծը :

Էծն էր սարին ;
Թուփն էր դարին ,
Գէլն էր քփին
Թփի տակին —
Տարաւ էծը բռնած վզէն .

Այս , չի բացւէր էս տարին
Մեր վրէն , մեր վրէն :

— Ելէք , տեսէք
Ո՞վ է զարկեր էն գէլը ,
Չար ու անսիրտ էն գէլը :

— Ելան տեսան
Քաջն էր զարկեր էն գէլը ,
Չար ու անսիրտ էն գէլը :

Էծն էր սարին ,
Թռուփն էր դարին ,
Գէլն էր թփին
Էծի բըկին .
Քաջը զարկաւ անսիրտ գէլը .
Բարով բացւէր էս տարին
Մեր վրէն , մեր վրէն :—

Յետո հնչեց էն թթվան
Սիրո պարը — «Զա՞ն , մարալ , զան» :

— Զարոն թ-ո՞ղ գա պարը վարի
Շքեղ բոյովն իր չխնարի ,

— Արի , Զէյլա' , ա'ո քո մուրադ ,
Զարոյի հետ պարէ հպարտ :

Զոյգ խումբ էին կազմեր հիմա
Մէկը՝ աղջիկ , մէկն ալ տղա .
Եւ դէմ դէմի ծափ – թափ տալով
Մէկ կուգային իրարու քով .
Մէկ ալ շորոր կերպային ետ
Բոժոժներու զնգոցի հետ :

- Զա՞ն, մարալ, զա՞ն,
Սարի տակէն ջուր կուգա,
Զան, մարա՛լ, զան,
Աղջիկ տղին դիւր կուգա.
- Զա՞ն, մարալ, զա՞ն,
Ես աղքիւրն եմ — դու ջուրն ես.
Զան, մարա՛լ, զան,
Ես՝ գլգլամ, դու խմես :
- Զա՞ն, մարալ, զա՞ն,
Բոյիդ մեռնիրմ — չինար է .
Զան, մարա՛լ, զան,
Դմբըլդ՝ արեւ ու վառ է . . .
- Զա՞ն, մարալ, զա՞ն,
Անհաս, լուսեղէն հա՛ւֆ ես,
Զան, մարա՛լ, զան,
Անմար բոցէ փափա՛ֆ ես . . .



Անեց պարը թափով, խինդով
Խնչպէս ծփան, ծիծղուն մի ծով .
Հոգս ու տարիք, քէն մոռացած
Գիւղը բոլոր՝ պար էր բռնած :

Երգեր կային, գովեր պայծառ
Յաղբող գիւղի փառքի համար .
Կըսէին թէ եւ ո՛չ ոֆի
Գիւղը պիստի ալ ծունկ չոֆի :

Զարոն՝ հետն ալ գիւղի ժաշեր,
Շէն ու շեն կը պարէր դեռ .

Եւ մայրերն ալ կը փսփսային
«Հազա՞ր երեխ քեզ սիրողին» :

Աղջիկներն ալ ծափ ու երգով
Պար կուգային որպէս զեփիւռ,
Շրբները՝ նուռ, կաֆու տոտով,
Աչքերն՝ արեւ, սրտերը՝ հուր :

— Սիրուն Զէյլա, մարալ աղջիկ,
Զա՞ն վառ սիրուդ, երազի՛դ,
Շէկիկ Զարո՛, հզօր մարտիկ
Բարով հասնես մուրազիդ :

Ըսին կոյսերն ու պա՞ր եկան —
Գիւլը կայնած հանդիսատես.
Ու շիկնեցաւ, սիրուն Զէյլան՝
Քափուր վարդի ու նուան պէս :

Պարը շուտով դարձաւ շուրջպար՝
Աղջիկ — տղա կապած շրջան.
Երբէ՛ք այդպէս շէն ու պայծառ
Զէր աղմկած գիւղի մէյդան :

Կանչեց Զարո՞ն —

Է՛յ ժողովուրդ,
Է՛յ ունչքարներ, թէ հայ թէ քուրդ.
Էծը, որ կար, այն մեր գիւղն էր,
Գէլը, որ կար, Ազիզ թեկն էր:
Այն ծեր գէլը այս մէկ անգամ
Տեսաւ կոտոշն մեր յաղբական
Եւ պոչը՝ կալս եւ վիզը՝ ծուռ
Կծիկ դրաւ շփոք, տխուր :


Բայց նա կուգա վաղը կրկին
Հետ գէլերու մեծ վոհմակին .
Նորէն կոտոշ քէ ցոյց չի տանք ,
Մեր գըլուխն ալ վրա կուտանք :

Ելնենք վաղւա կուի համար
Մենք միաբան եւ զինավառ .
Եւ վա՛յ անոր , ով որ մեր մէջ
Փուշ կը ցանէ եւ քէն ու վէն . . .



— Հոյնա՛ր , հոյնար
Մենք ոչ ոքէ չենք վախենար .
Հոյնար , հոյնար —
Ապրի վաղւա մեր գոռ պայֆար :

Կը պարէին այն տղաներ
Արեւէն դեռ դէմքերը քուխ .
Եւ ողջ գիւղն ալ պար էր բռներ —
Զարոն անոնց պարագլուխ :



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029650

A II
29650

1261